Հաստատված է

Հայաստանի Քաղաքացիական
հասարակության
կազմակերպությունների
Աջակցություն պրոբացիային ազգային
ցանցի 2-րդ համաժողովի կողմից

19 հուլիս, 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ, 2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների Աջակցություն Պրոբացիային ազգային ցանցը (այսուհետ՝ Ցանց) ոչ ֆորմալ կազմավորում է և գործում է ՀՀ գործող օրենսդրությանը, ինչպես նաև 2017 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված Հռչակագրին և սույն կանոնակարգին համապատասխան:

1.2 Ցանցը ձևավորվել և գործում է վերականգնողական արդարադատության արժեքների ընդհանրության, կամավորության, հավասարության, ինքնուրույնության, բարեխղճության և կառավարման կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

1.3 Ցանցի անվանումն է.

հայերեն՝

“Աջակցություն պրոբացիային ազգային ցանց”, հապավումը՝ ԱՊԱՑ:

ռուսերեն՝

“Национальная сеть в поддержку пробации”, հապավումը՝ НСПП.

անգլերեն՝

Support for Probation National Network, հապավումը՝ SPNN.

1.4 Ցանցը ունի խորհրդանիշ, տե՛ս՝ Հավելված 1:

1.5 Ցանցը կարող է իր նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական մարմիններին:

1.6 Ցանցը կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, արտասահմանյան, միջազգային և տեղական կազմակերպությունների, այնպես էլ ֆիզիկակն անձանց հետ:

1.7 Ցանցը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների ցանցերի, կնքել հուշագրեր և համաձայնագրեր օտարերկրյա, միջազգային, տեղական կազմակերպությունների և պետական մարմինների հետ:

2. ՑԱՆՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 **Ցանցի նպատակներն են.**

ա) Բարձրացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետև՝ ՔՀԿ-ներ) կողմից քրեակատարողական ոլորտում իրավական և դատական բարեփոխումների նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետությունը:

բ) Ամրապնդել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները և խթանել անցումը վերականգնողական արդարադատությանը;

գ) Նպաստել Հայաստանում պրոբացիայի ոլորտի բարեփոխումների իրականացմանը՝ անհրաժեշտ աջակցության ցուցաբերման, հանրային վերահսկողության իրականացման, ՔՀԿ-ների ներուժի համախմբման և կարողությունների զարգացման միջոցով:

դ) Աջակցել ՀՀ կառավարությանը պրոբացիայի ոլորտիին առնչվող խնդիրների հարցում, կատարել հետազոտություններ, ներկայացնել գործուն առաջարկություններ և տրամադրել տեխնիկական աջակցություն ցանցի գործունեության ոլորտին առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև աջակցել Պրոբացիայի պետական ծառայությանը վերականգնողական ծրագրերի իրականացման հարցում:

ե) Նպաստել Հայաստանում համայնքահեն արդարադատության, հանցագործությունների կանխարգելման և վերականգնողական արդարադատության գաղափարների զարգացման քաղաքականությունների մշակմանը՝ ՀՀ կառավարության և տեղական ՔՀԿ-ների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ձևավորման և խորհրդատվության միջոցով:

զ) Համակարգել ծրագրերի, հետազոտությունների, հրապարակումների և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ տեղեկատվության փոխանակումը և համագործակցությունն անդամ-կազմակերպությունների միջև:

2.2 **Ցանցի խնդիրներն են.**

ա) Իրականացնել հանրային վերահսկողության ծրագրեր իշխանության օրենսդիր, դատական, գործադիր ճյուղերում, ՏԻՄ-երում, դրանց արդյունքները հանրայնացնել և արդյունքներից բխող առաջարկություններ ներկայացնել պատկան մարմիններին:

բ) Համատեղել կարողությունները և ջանքերը մարդու իրավունքների պաշտպանության և վերականգնողական արդարադատության զարգացման ոլորտներում՝ նպատակ ունենալով համատեղ ծրագրերի իրականացման միջոցով հասնել օրենսդրական բարեփոխումների և հանրային վերահսկողության իրականացմանը, ոլորտային ՔՀԿ-ների կարողությունների ուժեղացմանը և համախմբմանը, ինչպես նաև քաղաքացիների իրավական իրազեկվածության բարձրացմանը:

գ) Խթանել առավել առողջ և առավել անվտանգ հասարակության և համայնքների ձևավորումը՝ ռազմավարական ու մարդու իրավունքների վրա հիմնված ծրագրերի ու նախաձեռնությունների ներդրման միջոցով, որոնք նպատակ ունեն նվազեցնել և կանխել իրավախախտումները, աջակցել միջազգային նորմերի և չափանիշների կիրառմանը և դյուրացնել անցումը վերականգնողական արդարադատությանը:

ե) Խրախուսել տեղական և միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը հանցագործությունների կանխարգելման, իրավախախտների վերասոցիալականացման և վերականգնման ծրագրերում:

դ) Մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված հասարակության վերականգնողական արդարադատության ընկալման և իրազեկության մակարդակի բարձրացմանը, վերականգնողական ծրարգրերում հասարակության ներգրավվածության ապահովմանը՝ օգտագործելով նաև ժամանակից տեղեկատվական տեխնոլոգիաները:

ե) ՔՀԿ-ների մոնիթորինգի, հանրային վերահսկողություն իրականացնելու և պրոբացիայի գործունեության իրականացման հետ կապված կարողությունները ամրապնդելու նպատակով կազմակերպել սեմինարներ, ուսուցումներ և այլ միջոցառումներ:

զ) Զարգացնել ցանցի անդամ կազմակերպությունների միջև համագործակցությունը:

է) Մասնակցել պրոբացիայի հետ կապված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծման և փորձաքննության աշխատանքներին:

ը) Կազմակերպել համաժողովներ, աշխատաժողովներ, սեմինարներ, կլոր սեղաններ, դասընթացներ, հանդիպումներ, քննարկումներ, իրականացնել վերականգնողական արդարադատության ոլորտի զարգացմանն ուղղված այլ աշխատանքներ:

3. ՑԱՆՑԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ցանցի անդամ կարող են լինել քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, ներառյալ հասարակական շարժումները և նախաձեռնությունները, որոնք միացել են Ցանցի Հռչակագրին, ընդունում են սույն Կանոնակարգը, իրենց գործունեությամբ նպաստում են Ցանցի նպատակների իրագործմանը:

3.2 Գրավոր դիմումի համաձայն Ցանցի անդամի ընդունելության մասին որոշումը կայացվում է Ցանցի Կառավարման խորհրդի կողմից՝ Կառավարման խորհրդի առնվազն երկու անդամների երաշխավորմամբ:

3.3 Ցանցը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: Ցանցի անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է Ցանցի կառավարման խորհրդի կողմից:

3.4 Ցանցի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ Ցանցի կառավարման խորհրդի՝ տվյալ անդամին Ցանցի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգի 3.6 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

3.5 Ցանցի անդամն իրավունք ունի՝

ա) իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել Ցանցի կառավարմանը,

բ) Ցանցի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,

գ) ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,

դ) նախաձեռնել ծրագրեր՝ ուղղված Ցանցի զարգացմանը,

ե) իրազեկ լինել Ցանցի գործունեությանից,

զ) օգտվել Ցանցի իրավական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,

է) անարգել դուրս գալ Ցանցի անդամությունից:

3.6 Ցանցի անդամը պարտավոր է.

ա) բարձր պահել և տարածել վերականգնողական արդարադատության սկզբունքները և արժեքները,

բ) մասնակցել և աջակցել Ցանցի գործունեությանը,

գ) նպաստել Ցանցի զարգացմանը,

դ) առանց Ցանցի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես գալ հայտարարություններով կամ ձեռք բերել պայմանավորվացություններ Ցանցի անունից,

ե) գործել սույն կանոնակարգին համապատասխան, կատարել Ցանցի կանոնակարգի պահանջները, Ցանցի ղեկավար մարմինների որոշումները:

3.7 Ցանցի անդամը պատասխանատվություն չի կրում Ցանցի անդամ այլ կազմակերպությունների պարտավորությունների համար, ինչպես նաև Ցանցը պատասխանատվություն չի կրում իր անդամների՝ Ցանցի գործունեության շրջանակներից դուրս պարտավորությունների համար:

4. ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Ցանցի կառավարման կառուցվածքն է՝ համաժողովը, կառավարման խորհուրդը, քարտուղարությունը և էթիկայի հանձնաժողովը:

4.2 Ցանցի բարձրագույն մարմինը նրա **անդամների համաժողովն** է, որն օժտված է Ցանցի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությամբ:

4.3 Համաժողովը կազմված է անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներից ի դեմս կազմակերպությանը ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց: Այդպիսի իրավասություն չունեցող անդամ կազմեկերպությունների ներկայացուցիչները կարող են մասնակցել համաժողովներին՝ առանց ձայնի իրվունքի: Անդամ կազմակերպություններից յուրականչյուրն ունի մեկ ձայնի իրավունք:

4.4 Համաժողովին պատկանում է Ցանցի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը:

4.5 Կառավարման խորհուրդը որոշում է համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև համաժողովի օրակարգի նախագիծը և այդ մասին համաժողովի անցկացումից ոչ ուշ քան 10 օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է Ցանցի անդամներին:

4.6 Ցանցի համաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

4.7 Ցանցի արտահերթ համաժողով գումարվում է Ցանցի քարտուղարության, Ցանցի կառավարման խորհրդի, Ցանցի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում: Ցանցի անդամները արտահերթ համաժողով հրավիրելու մասին տեղեկացվում են ոչ ուշ, քան 5 օրացուցային օրվա ընթացքում՝ Ցանցի քարտուղարության կողմից: Արտահերթ համաժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով: Ցանցի համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Ցանցի համաժողովին մասնակցում են Ցանցի բոլոր անդամների կամ համաժողովի բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են համաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել նաև էլեկտրոնային կապի միջոցներով:

4.8 Ցանցի համաժողովը.

ա) հաստատում է Ցանցի կանոնակարգը, կատարում է փոփոխություններ դրանում և (կամ) հաստատում է նոր կանոնակարգը,

բ) որոշում է Ցանցի կառավարման խորհրդի թիվը ու քվոտաները, մեկ տարի ժամկետով ընտրում է Ցանցի կառավարման խորհրդի անդամներին, փոփոխում է կառավարման խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է կառավարման խորհրդի անդամների լիազորությունները,

գ) քննարկում և հաստատում է Ցանցի կառավարման խորհրդի և քարտուղարության հաշվետվությունները:

ե) ընտրում է Ցանցի Էթիկայի հանձնաժողովի անդամներին:

4.9 **Ցանցի կառավարման խորհուրդը.**

ա) համարվում է Ցանցի ղեկավար մարմինը Ցանցի համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

բ) քննարկում և որոշումներ է կայացնում Ցանցի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Ցանցի համաժողովի իրավասությունների մեջ,

գ) նախապատրաստում է Ցանցի համաժողովները,

դ) որոշում է կայացնում Ցանցին անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ,

ե) որոշումներ է կայացնում Ցանցի մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, աշխատանքային և տարածքային հանձնախմբեր և/կամ այլ կառույցներ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնակարգին և Ցանցի Էթիկայի կանոններին, նշանակում և ազատում է դրանց համակարգողներին և պատասխանատուներին, վերջիններիս տալիս է լիազորագրեր,

զ) քննարկում և հաստատում է Ցանցի ռազմավարական պլանը, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը և այլ փաստաթղթեր,

է) ընտրում է Ցանցի հանձնաժողովների, աշխատանքային և տարածքային հանձնախմբերի, փորձագիտական կոմիտեի և/կամ այլ կառույցների անդամներին,

ը) որոշում է կայացնում Ցանցի՝ պետական և անկախ կառույցներին կից հասարակական խորհուրդներին, հանձնաժողովներին և այլ մարմիններին, ինչպես նաև միջազգային ցանցերին անդամակցելու վերաբերյալ,

թ) հաստատում է կառավարման խորհրդի նախագահի և քարտուղարության ընտրության կարգը, ընտրում է կառավարման խորհրդի նախագահին և վաղաժամկետ դադարեցնում է վերջինիս լիազորությունները,

ժ) Ցանցի անունից ընդունում է որոշումներ և հանդես է գալիս հայտարարություններով, հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:

4.10 Ցանցի կառավարման խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Ցանցի կառավարման խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.11 Ցանցի կառավարման խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է երեք ամիսը մեկ անգամ՝ Ցանցի քարտուղարության կողմից: Ցանցի կառավարման խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ցանցի կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի գրավոր պահանջով, Ցանցի կառավարման խորհրդի նախագահի կողմից կամ Ցանցի քարտուղարության նախագահի կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել կառավարման խորհրդի ընդլայնված նիստեր՝ Ցանցի հանձնաժողովների, փորձագիտական կոմիտեի և տարածքային հանձնախմբերի համակարգողների և պատասխանատուների, ինչպես նաև Ցանցի այլ անդամների մասնակցությամբ:

4.12 **Ցանցի քարտուղարությունը.**

ա) հանդիսանում է Ցանցի գործադիր մարմինը,

բ) ապահովում է Ցանցի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը և թափանցիկությունը,

գ) նախագահում, արձանագրում և ստորագրում է Ցանցի համաժողովի նիստերը,

դ) արձանագրում է կառավարման խորհրդի նիստերը,

ե) տնօրինում է Ցանցի արխիվը,

զ) համակարգում է Ցանցի կազմակերպչական աշխատանքները, այդ թվում՝ Ցանցը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, Ցանցի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է Ցանցի կողմից պատրաստված առաջարկներ և այլ փաստաթղթեր,

է) համակարգում է Ցանցի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները,

ը) վարում է Ցանցի անդամների հաշվառումը, անդամության նոր դիմումներ ներկայացված հայտերի ռեեստրը,

թ) Ցանցի քարտուղարության գործառույթները իրականացնում է համաժողովի կողմից լիազորված հասարակական կազմակերպությունը, որի ղեկավարը ի պաշտոնե հանդիսանում է Ցանցի քարտուղարության համակարգողը:

4.13 Ցանցի քարտուղարության գործառույթներն իրականացնող կազմակերպությունն ի պաշտոնե մտնում է Ցանցի կառավարման խորհրդի կազմի մեջ: Ցանցի քարտուղարության համակարգողը հանդիսանում է Ցանցի խորհրդի նախագահը՝ մինչև կառավարման խորհրդի կողմից կառավարման խորհրդի նախագահի ընտրության կարգի հաստատումն ու նախագահի ընտրությունը:

4.14 **Ցանցի էթիկայի հանձնաժողովը.**

ա) կազմված է 3 անդամներից, որոնք ընտրվում են Ցանցի անդմաների ներկայացուցիչներից,

բ) գործում է մինչեւ հաջորդ էթիկայի հանձնաժողովի կազմավորումը,

գ) եզրակացություն է ներկայացնում Ցանցի անդամի կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքերի վերաբերյալ,

դ) Ցանցի անդամին եզրակացություն է ներկայացնում, եթե Ցանցի անդամը չի կողմնորոշվում, թե ինչպիսի վարքագիծ դրսևորել որոշակի իրավիճակում և դիմում է համապատասխան հարցով էթիկայի հանձնաժողովին,

զ) եզրակացությունն ուղարկում է Ցանցի կառավարման խորհրդին՝ հետագա քննարկման և որոշում կայացնելու համար:

4.15 էթիկայի հանձնաժողովը կարող է՝

ա) ցանկացած Ցանցի անդամից ստանալ Էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ,

բ) Էթիկայի հանձնաժողովի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ այլ տեղեկությունները պետք է նրան ուղարկվեն հարցումը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը Էթիկայի հանձնաժողովի պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում:

4.16 Էթիկայի հանձնաժողովին կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ Էթիկայի կանոնների ենթադրյալ խախտման դեպքում

4.17 Դիմումը ներկայացվում է գրավոր կամ էլեկտրոնային փոստի միջոցով եւ պետք է պարունակի՝

ա) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը

բ) Էթիկայի կանոնների պահանջների խախտումը հավաստող, ինչպես նաեւ հարցի պարզաբանման կամ լուծման համար անհրաժեշտ տեղեկություններ.

գ) դիմումը կազմելու տարին, ամիսը եւ ամսաթիվը,

զ) դիմողի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

4.18 Էթիկայի հանձնաժողովի անդամի առաջարկությամբ, սակայն ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում, Էթիկայի հանձնաժողովը սկսում է դիմումում բարձրացված հարցի քննությունը և կազմում է համապատասխան եզրակացություն:

4.19 Էթիկայի հանձնաժողովը կարող է մերժել դիմումի քննարկումը, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Էթիկայի հանձնաժողովին կամ նույն անդամի եւ նույն հիմքով ներկայացված դիմումի վերաբերյալ առկա է Էթիկայի հանձնաժողովի եզրակացություն:

4.20 3 օրվա ժամկետը կարող է Էթիկայի հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել մինչեւ 20 օրով, եթե հարցի քննության համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերելու եւ հարցի քննության մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության եզրակացություն ընդունել: Հարցի քննության ժամկետի երկարաձգման մասին Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է շահագրգիռ կողմերին:

4.21 Հանձնաժողովը պարտավոր է հնարավորություն տալ Ցանցի այն անդամին, որին վերաբերում է դիմումը, պարզաբանումներ տալ դիմումում բարձրացված հարցերի եւ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաեւ հիմնավորել իր դիրքորոշումն ամբողջությամբ:

4.22 Հանձնաժողովի եզրակացությունները պետք է լինեն գրավոր, պատճառաբանված և ըստ էության։

4.23 Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունները ուղարկվում են բոլոր շահագրգիռ կողմերին։

5. ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1 Ցանցը չունի առանձնացված գույք:

5.2 Ցանցի միջոցները գոյանում են օրենքով չարգելված այլ աղբյուրներից։

5.3 Ցանցի միջոցները Ցանցի կառավարման խորհրդի որոշմամբ՝ ներգրավվում են Ցանցի անդամ կազմակերպության(ների) միջոցով, իսկ ներգրավված միջոցներն օգտագործվում են բացառապես Ցանցի նպատակների և խնդիրների իրականացման համար:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Ցանցը կարող է դադարել համաժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է քվեարկում Համաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

6.2 Ցանցի դադարումը անդամ կազմակերպությունների համար պարտավորություններ չի առաջացնում:

Հավելված 1. Ցանցի խորհրդանիշը.

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻՆ
ԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՑ